33. ՂԱՐԱԲԱՂԵՆ ԱՐԱՂԸ

Վարանդան մըեծ մելիքութուն ար Ղարաբաղի հենգյ հայ մելիքութուններին մեչին։ Էտ Վարանդին Մելիքին տըղան արաղ խմող ար։ Դե հո՞ւնց չի խմի՞, ըշտղին եշըմ ըս, թթի բաղեր, էտ բաղերըմը թոթա արաղ քաշողնը՞, լոխճին տանը արաղու պոժկընի՞, արաղ, հի՞նչ արաղ, մին քյահրըբա՞ր, պեց տրեղին քյահրըբա՞ր, սաղ աշխարքիս հրետի տրեղըճար։

Մին հետ համին էտ Մելիքին տըղան հարփոնում ա, ուրանց բաղըմը մին լավ, տիրևնին շոլկվի, շըղշողում, մըեծ թթի ծառի տակի թեքյ ընգնում, քոն ինում։

Էրկու արծիվ գյիդում ըն, թա մըեռած ա, կյամ ըն աշկերը հանում։ Էտ տըղան մնամ ա քոռ։

Ըտրա հարը՝ Վարանդու Մելիքը պաճճառը վըեր գյիդում ա, հրամմայում ա, վըեր հիշքան թթի բաղեր կա, լոխ տակռավը հանին, տեն քըցին, վըեր էլ արաղ չի քաշին, վըեր էլ մին թթի ծառ չինի՞։

Դե Մելիքին հրամմանը հո՞ւ կկարի տափը քըցի, մին կըծըկրակ ա, մին օրիշ թահրի պե՞ն։ Հունց ա ինըմ, մին ըրփըվերի կընգա մին պուճուր թթի բաղ ա մընըմ հաղուղին բաղերին մեչին կյողը կացած։ Էտ ըրփըվերի կընեգյը ամառնը էտ թոթը թափըմ ա, հվաքըմ, ածըմ մին պոժկու մեչ, ըտրանա թաքուն-թաքուն արաղ քաշըմ ուրանց տանը հետե։ Լոխ մին քանի վեղրա յա ինըմ, տինըմ տանը տակե օթախըմը, կյեղըմ։

Ամմեն օր էրկու ստաքան հանըմ ա, մինը տամ ուրան մաղար

տըղին, մինն էլ ինքը խըմըմ։ Էտ արաղան օժ առնելանը եռը, քյը-նըմ կօրծի։

Մին օր էտ շահիլ տըղան անց ար կըենըմ Մելիքին պալատին քըշտավը, բո̈ւրդա̈ն ընդըրա յրան ա պըրծնըմ մին կըտաղած ա̈ռո̈ւծ։ Էտ ա̈ռո̈ւծին հա̈լա̈ Թուլա վախտը, Իրանին շահըն ար բաղարկա տվալ Մելիքին։

Էտ տըղան ո̈ւրա̈ն կուրցընըմ չի, փըռնըմ ա ա̈ռո̈ւծին պըկան, չա̈նա̈ն եր քաշըմ, ա̈ռո̈ւծին ըռեխը ճըղըմ, քըցըմ էն ղոլը։

Էտ վըեր Մելիքը ո̈ւրա̈ն բալկոնան տըեսնըմ ա, լափ կըտաղըմ ա։ Կանչըմ ա էտ տըղին ո̈ւրա̈ն կօշտը, վըեննան մինչև կըլո̈խ եշըմ, ասըմ.— Ախկադի լակուտ, տու հունց էն ա̈ռո̈ւծին ըռեխը ճըղեցիր, ասի տըեսնամ քու օժըռ հի՞նչան ա, ըշտըղա յա՛։ Էտ տըղան սու՜ս ա անըմ, կըլո̈խը քաշ, կաղնըմ։

Մելիքըն ասըմ ա.— Դե վըեր իտի օժավ ըս, ըսօր գյիրագի օր ա, լո̈խ տանը։ Էն մին ա̈ռո̈ւծին նըհետ էլ բա̈ս կը մըննիս, կըռեվ կանիս, մըեր լո̈խճին առաչին, յա ընդըրա ըռեխըն էլ կըճըղի՛ս, կըտեռնաս Ղարաբաղի ա̈ռո̈ւծի ճոտ տըղորցան լո̈խճան օժավը, էն վախտը քյըեզ սաղ-սըլըմաթ կըթողի՛մ, յա էլ ա̈ռո̈ւծը քյըեզ պըտըռ-պատառ կանի, մունք էլ թըմաշա կանինք։ Էս էրկու պայ-մանան մինը ըիդի կըդարիս։

Էտ տըղան ասըմ ա. — Լա̈վ, Մելիքը ապրած կռենա, էլ օրիշ հի՞նչ կկարիմ խոսիմ, ըհա̈ թող քյինիմ իմ մոր տըեսնամ, էլհա եռ կյամ։

Էտ տըղան կյամ ա տոն, լո̈խ մորը նաղլ անըմ։ Մարը տըես-նըմ ա, վըեր էտ աշկերը ա̈րո̈ւն կալած Մելիքան պըռծում չի կա՛, քյինըմ ա տանը տակե օթախան էրկու ստաքան ա̈րա̈ղ պըերըմ, տը-ղին խըմըցնըմ, ասըմ.—Ա՛յ բալա, քյինի, վախիս վեչ, էտ արաղին մեչին ա քու հայրենի վըեղիտ օժը, քյինի էն մին ա̈ռո̈ւծին էլ սըտ-կըցրու։

Էտ տըղան քյինըմ ա։

Էտ Մելիքը գյադոցը հրամման ա տըվալ, վըեր ա̈ռո̈ւծին լա̈վ ուտուցնին, մին սաղ վըեխճար տան։

Ղոնաղնին հըվաքվալ ին էն պըեցուր բալկոնը, վըեր ընդըղան եշին։ Հու վըեր սըրտըմը խեղճ օնեռ, էտ տըղին մեխկըն ա կյամ, հու վըեր ծնողի սըեռտ չօներ, ծըծաղըմ ա, թայդի տամ։ Դե՛հա, հա դե՛հա, շո̈ւտ պըերին հայաթը էն ա̈ռո̈ւծին, վըեր էն տըղին պըտըռ-պատառ անի, ո̈ւրա̈նց քեփն էլ կյա։ Կընանիքյ, մարթիքյ տո̈ւս ին տեռալ, բալկոնը մըե՛ծ, լե՛ն։ Մելիքը տո̈ւս ա կյամ, բեղերը հո̈ւլը՛-

ռելավ, կարակուլ փափաղը կելխին, թընգյանոց չոխան, արխալուղը կյեցին, աշկերը կյրմըրոտած, հրամման ա տամ՝ սկսին։ Վրեր իրեքինշի զանգյը տամ ա, էն տըղին տուս ըն պերըմ, էն մին ղոլան էլ առուծը պահող նոքյարը առուծին կապը պեց ա թողըմ։ Կընանիքը տըղտողըմ ըն, վրեր առուծին տրեսնըմ ըն, շատերը աշկերնին կապըմ ըն։

Էտ տըղան մին լավ եշըմ ա առուծին տուրուր կյալը, ինքը ուրան հըվաքըմ, առուծը վրեր լոք ա տամ էտ տըղին յրա, էտ տըղան դաստի առուծին կոխկըն ա անց կրենըմ, կոխկան փրունըմ չանին էրկու ղոլերան, մեչան ճըղըմ էն ղոլը քըցըմ։ Հուրը սըրտըմ ծնողի սեր կար, խրեղճ կար, ուրխանըմ ա, վրեր էտ մադար տըղան ազադվից, հուրը սըրտըմ ծնողի սեր չիկար, սըերտըն էլ քար ա, արուն-կալած, էն էլ տըխրվըմ ա։

Մելիքը էն ղալին էրգյան հունքերը ուրուր ա տամ։

Վրեր լոխ քյընըմ ըն ուրանց տները, Մելիքը էտ տըղին կանչըմ ա, ասըմ.— Դե վրեր իտի յրս ըրալ, պիտի ասիս, թա քու օժըտ հի՞նչա յա։

Էտ տըղան վեշ մին պեն չի ասըմ։ Վրեր Մելիքը շատ ա սդիրըմ, ասըմ ա.— Մելիքը ապրած կրենա, թող քյինիմ իմ մոր տրեսնամ, կյամ քյըեզ ասիմ։

Մելիքը ռազի յա կրենըմ։

Էտ տըղան քյընըմ ա տուն, լոխ մորը նաղլ անըմ։ Մարըն ասըմ ա. — Ա՛ բալա, օժիտ փանղը ասիս վայ ա՜, ասիս վեչ էլհա վա՜յ ա՜, բա էս հո՞ւնց անինք,— բա հո՞ւնց ասինք, վրեր մըեր թթի բաղը կենըմ ա, մունք արաղ ընք քաշըմ, էտ արաղը հայրենի վրեղին օժը խմողին ա տամ, արևին օժը խմողին առուծի օժ ա տամ։

Մարը տըղա մըտածըմ ըն, մըտածըմ, վերչը կյամ ըն էն մըթկին, վրեր քյինին ասին, հինչ վրեր դուզըն ա։

Մարը մին բոթուլ արաղ ա տամ տըղին, թա տանի տա Մելիքին, համ էլ ասի, թա օժը հինչտրեղա յա։

Տըղան կյամ ա Մելիքին կոշտը, ասըմ.— Մելիքը ապրած կրենա, քու վրեղըմըտ վեչ մին թաքուն պրեն չի ինիլ, իմ օժըս էս բոթուլին մեչին ա, էտ էլ մըեր բաղան ա, բաղը օժ ա առալ մայր վրեղան, վրեղը աշխարքըմրս լոխճան օժավրն ա, խընթրըմ ըմ պըրոբ ըրիք, արեոիք սո՞տ ըմ ասըմ, թա՞ ըղորթ։

Մելիքը մին ստաքան խըմըմ ա, տրեսնըմ ա քյեփը եկավ, ծըծաղը, երքը եկավ։

Էրկունչի ստաքանը վրեր խըմըմ ա, տրեսնըմ ա սաղ պալատը

էնա ծրեռքին մրեչին, ինքն էլ պրցրանրմ ա, թա թրռչի ուրան սարերին արծիվներին նման, շրռտրշռռտու անի երգինքումը։ Իրեքինջի ստաքանը վրեր խրմրմ ա, տրեսնրմ ա, վրեր լոխճան ծանդր պենները ուրան ծրեռքին հունցու մին տրկողին, մին ճուղուպուր, մին նոխուդ, էնքան թիթև ա ինրմ։

Էտ վրեր Մելիքը տրեսնրմ ա, վրեր արաղը իտի օժավ պրեն ա, մարթի օժ ա տամ, արաղրն էլ ստանրմ ըն, էն մրեղրի համավ, էն մարթի պրրանրմ մրղրաճուր տրեռնող թոթան, էն ամման մինը մին բրամի չանք, բեդանա թոթան, թթի ծառերրն էլ ուրանց օժը ստանրմ ըն մայր վրեղան, հրամման ա տամ Ղարաբաղին մելիքներին, ուրան էլ նրհետը, վրեր սաղ Ղարաբաղի վրեղին կրեսը, հալա կրեսան էլ շատ, թթի բաղեր քրցին։

Ըտրանա ետը լոխճան առաչ ուրան վրեղրմրն ա թթի բաղեր քրցրմ, էն տակռավը հանած օրանա վրեբանա բաղերը թազադան թթի բաղեր ըն քրցրմ, ավադ անրմ, մրեծ-մրեծ բաղերրմը արաղ քաշելի քյարխանա յրն տինրմ։ Էն ղաշանդյ շրղշողրմ շոլկվի տիրևներավ, մարթի սրրտի մնան, կոխկերքը սրռսեռուտ տիրևներավ ծառերը մրծանրմ ըն, հաղուղի պուճուր գիլի մրնան ուրուր անա կացած թոթը, մին բրրամի չանք, հրսնրմ ա, շափաթը մին հետ բաղերը թոխմախավ թափրմ ըն, մրեծ շալին ղրղներան փրռնող հարթները, ըխճրկերքը օրախ-օրախ, ծրծղելավ, ասելավ-խոսելավ, ուրուր նրհետ հանագյ ընելավ, թոթը տանրմ ըն ածրմ պուսկենեն, քրցրխելանը ետը արաղ ըն քաշրմ, պեց տեղին, քյահրրբա՞ր, օժ տրվող, հիվանդին ղարման, սաղ աշխարքիս հայտնի Ղարաբաղի արաղ։ Վրեր խրմողը ասրմ ա.—Արաղ չի է՞, մրեռուն ա, մրեռու՞ն...

Օժավանրմ ըն, լիյանրմ, քյրեփ անրմ, գյուդում ըն, թա աշխարքիս լոխճան բախտավեր մարթիքն ըն։

Էլհա ճուրը ուրան ճրնապարավրն ա քյինրմ, էլհա լոխ օրա՞խ, զրվա՞րթ, օժա՞վ, մին մին ասուծնի։ Էլհա տրնազին ծիծաղը պրրրններին, սոր խոսող, խոսկի հետի ծրեռքը շուբը չի տանո՞ղ, էն վախտը առանց ուսումի, ամմա խելունք ղարաբաղցիք։

Ըտրանա ետը Վարանդու Մելիքը, վրեր պրռավրմ ա, ուրան կոշտրն ա կանչրմ, ուրան ծրեռքին տակին կյիր, հրամման, օրենքյ, տես-տեն կյրողին, կտակ ա կյիրիլ տամ։ Ղարաբաղին անա, շատ պեներ ա կյիրիլ տամ, ըտրանց կոխկին էլ կյիրիլ ա տամ, ասրմ. — Ա՛ բալեքյ, հու վրեր Ղարաբաղին նի կյա, ընդրա թթի բաղերին նի կյա, տանավ, տրեղավ կորչելու յա, կրլոխը օյիննի յա կյալու, փրեշման ա մրնալու, էտ պենը իմ կլոխս եկած ա, Ղարաբաղի թթի

բաղերին նի կյրվողը նրհախ տրեղան ա նի կյալու՞, վրերչը էլհա ճուրը ուրան ճընապարավրն ա քյինալու, թթի բաղերին նի եկողը, թթի ծառերը կրտորիլ տրվողը վրերչը մընալու յա քոռրփրեշման։ Ա՛ բալեքյ, ծրեր բաղերը քանդիքյ վրեչ։ Ծրեր օչաղը հընգյրցնիք վրե՞չ։

Իտի լոխ, հինչու հարկավեր ա, կյիրիլ ա տամ, ինքը մրեռնըմ։ Ղորմի ընդրանց, էտ մելիքներին, ղորմի մրեր նան ծրեր նամուսավ, ղեյրաթավ պապերի՞ն։